ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (0283) 2-33-30 ֆաքս (0283) 2-33-30
էլ. հասցե http://www.sisian.am/
էլ. փոստ sisiancity@sisian.am

23 մայիսի 2025թ.

ՈՒՂԵՐՁ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ շրջանավարտներ.

Սրտանց ու ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ ձեր կյանքի ամենահիշարժան օրերից մեկի՝ դպրոցական Վերջին դասի կապակցությամբ:

Այսօր դուք կանգնած լինելով ճամփաբաժանին՝ հրաժեշտ եք տալիս ոչ միայն պատանեկան տարիներին, այլև արդեն հարազատ դարձած կրթօջախներին, որտեղ ապրել եք ուրախ և հուզառատ պահեր, ստացել եք բազում գիտելիքներ, ձեռք եք բերել ընկերներ, ունեցել իմաստուն ուսուցիչներ:

Ավարտելով դպրոցը, կանգնելով նոր կյանքի շեմին՝ մուտք եք գործում սպասելիքներով, ցանկություններով, ձեռքբերումներով և վերելքներով լի աշխարհ:

Ես մաղթում եմ, որ նոր կյանքում ձեր առջև ծառացած յուրաքանչյուր խոչընդոտ ու փորձություն կարողանաք հաղթահարել՝ նվիրվելով և հավատարիմ մնալով սեփական սկզբունքներին:

Հարգարժա՛ն մանկավարժներ.

Այսօր առավել հուզված եք դուք, քանզի հերթական անգամ նոր կյանք եք ճանապարհում ձեր սաներին, որոնց մանուկ հասակից ծնողական սիրով, ջերմությամբ եք պարուրել՝ տալով արժանապատիվ կրթություն ու հայեցի դաստիարակություն:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ձեզ, քանզի ձեր անձնուրաց ու հայրենանվեր աշխատանքի շնորհիվ է, որ կրթօջախներից դուրս են գալիս և հասարակություն են մտնում դաստիարակված ու գիտակից երիտասարդներ, որոնք վստահաբար մեր պետության համար դառնալու են արժանավոր և պիտանի քաղաքացիներ:

Սիրելի՛ շրջանավարտներ.

Նորանոր նվաճումներ, վերելքի բազում ուղիներ և մեծ հաղթանակներ եմ մաղթում: Թող Աստված ի կատար ածի ձեր բոլոր ցանկություններն ու նպատակները:

Կանաչ ճանապարհի և բարի երթ բոլորիդ:

Հ. Առաքելյան